ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- հոկտեմբերի 2021 թվականի №---Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի №90Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՔԱՐԱՀՈՒՆՋ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի սեպտեմբերի 17-ի և սեպտեմբերի 22-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2012 թվականի մարտի 21-ի «ՔԱՐԱՀՈՒՆՋ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Քարահունջ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №90Ա որոշմամբ «ՔԱՐԱՀՈՒՆՋ ՀԷԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0458 լիցենզիայի պայմաններում ամրագրել վերակառուցման ժամանակահատված՝ մինչև 2022 թվականի հոկտեմբերի 21-ը, որոշման հավելվածի 3-րդ և 6-րդ կետերը շարադրելով հետևյալ խմբագրությամբ.

«3. Սույն լիցենզիան գործում է մինչև 2027 թվականի մարտի 21-ը, որից՝

1) 2021 թվականի հոկտեմբերի 21-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 21-ը վերակառուցման ժամանակահատվածն է,
2) մինչև 2027 թվականի մարտի 21-ը էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության գործունեության իրականացման ժամանակահատվածն է:»,

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում՝ Լիցենզիայով սահմանված ժամկետում (ժամանակահատվածներում) վերակառուցել 1349 կՎտ հաշվարկային հզորությամբ «Քարահունջ» փոքր հիդրոէլեկտրակայանը (այսուհետ՝ Կայան), արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) և այն վաճառել Շուկայի կանոններին համապատասխան:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հոկտեմբերի 21-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- հոկտեմբերի 2021թ.